Հմտագոյն բանասէրք ժամանակէ մը ի վեր այս մասին հակառակ կարծեաց բաժնուած են ցարդ, և այսպիսի ծանրակշիռ գիւտի մը խորաթափանց քննութեան կը սպասեն անշուշտ իրաւամբ ամէնքն ալ որպէս զի այս պատմական կասկածելի կէտն ևս լուսաւորուի: — Իսկ մենք ևս ընդարձակագոյն տեղեկութեանց կը սպասենք:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

15 ՄԱՅԻՍ

### ԱՆԳՂԻԱ

ԱՆՑԵԱԼ ամսոյ մէջ սկսան Անգղիացւոց անյաջողութիւնքն յԱփրիկէ: Ռօպէրթս ստիպուեցաւ կեդրոնանալ Պլումֆօնդէյնի մէջ իրեններուն հետ, որք ձի ալ չունէին: Պօէրներն ջախջախեցին բոլոր ջրոց ագուգաները, և նորէն զօրացան, և իրենցմէ Ֆիշէր, Վալմարանս և Վէսսէլս անցան յԵւրոպա և գնացին յԱյա, որոց նպատակն էր տէրութեանց օգնութեամբ խաղաղութիւն կամ զինադադարումն ընդունել:

Անգղիոյ թագուհին Տուպլինի մէջ շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ, բայց Կալլէսի իշխանին կենաց դէմ դաւադրութիւն կար Սիփեռոյի ձեռքով, որ չյաջողեցաւ:

Անգղիացւոց բանակին մէջ հիւանդութիւն իյնալուն պատճառաւ՝ Ռօպէրթս կը դանդաղի շարժելու, թէպէտեւ ձիաւորաց համար կրցաւ ձիեր ճարել: — Վարրէն և Պիւլլէր զօրավարներն շատ կը պախարակուին, և Անգղիացիք իմացան իրենց հրամանատարաց ոչ միայն անհմտութիւնը, այլ և հրահանգեալ չըլլալը:

### ԻՏԱԼԻԱ

Արքունական հրովարտակով պատերազմի պաշտօնեայ անուանուեցաւ կոմսն Կօրիօլանօս Փոնցա, միեւնոյն ժամանակ՝ ծերակուտի անդամ — Ճենովայի դուքսն ի Հռովմ եկաւ՝ ծովային պատերազմափորձերու կատարման մասին խօսելու համար: — Սանֆանիա իշխանուհին իւր Լոնդէյ կոմս ամուսնոյն հետ ի Հռովմ ընդունելութիւն գտաւ Ս. Քահանայապետէն, որ անոնց հետ գրեթէ կէս ժամ խօսեցաւ:

Թագաւորն Իտալիոյ՝ նախ Նէապօլսոյ մէջ զինուականաց ժողովոյն ներկայ եղաւ, և ապա դարձաւ ի Հռովմ. և ի Նէապօլիս որոշուեցաւ որ Իտալիոյ ներկայացուցիչն ըլլայ Նէապօլսոյ իշխանն՝ ի Պերլին կայսեր ժառանգին համար ըլլալիք հանդէսին մէջ, ուր են Աւստրիոյ կայսրն, Ռուսիոյ մեծ դուքսն Կոստանդին, և այլք:

### ԱՅԼԵՒԱՅԼ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

ԱՒՍՏՐԻՈՅ լրագիրք կանխաւ յայտարարեցին Փր. Յովսէփ կայսեր այցելութիւնը ի Պերլին՝ Կօլուքովսքի կոմսի հետ. այս այցելութիւնս փոխադարձ կը համարուի Գուլիելմոս Բ.ի այցելութեան. բայց անշուշտ քաղաքական կէտեր ալ պիտի ունենայ, ինչպէս են Պալքանեան խնդիրներն, և այլն: — ՉԻՆԱՍՏԱՆԻ մէջ Պօքսէրներու ծածուկ ընկերութիւնն բաւական կը խռովեն երկիրը, և շատ մը ճենացի ուղղափառներ սպաննեցին: Եւրոպական տէրութիւնք բռնադատեցին կայսերական վարչութիւնը՝ որ ցրուէ այդ խռովարար ընկերութիւնը: — ՔՈՒՊԱ կղզւոյն մէջ խռովութիւն մը սկսաւ Միացեալ Նահանգաց դէմ, և խռովութեան պարագլուխ կ'երեւի քուպացին Ռապի: — ԳԱՂՂԻՈՅ այժմեան ամենէն մեծ ուշադրութիւնն դարձած է իւր Ցուցահանդիսին, որուն մէջ վերջերս պատահած մի քանի ձախորդ դէպքեր յուզեցին զՓարիզ, և լրագիրք սաստիկ ուժով գրեցին այս մասին: Բացմանէն անմիջապէս ետքը անթիւ բազմութիւն մտաւ Ցուցահանդիսին մէջ: Եւ այսպիսի յաջողութեան համար ուրախակցութեան հեռագիրներ հասան առ Լուպէ նախագահն և առ Վալտէք Ռուսօյ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՐՍԷՍ Հ. Ս. — Կրօնք և Ազգութիւն . . 241

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ. — Արշալոյս քրիստոնէութեան հայոց . . . . . . . 245

ՁՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Ս. Հիպպոլիտոս և իւր գրուածք հայ մատենագրութեան մէջ . 250

ՃՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Տեղագրական. — Արկազն և Արմաւիր . . . . . . . 255

Հայկական երաժշտութիւն . . . 259

ՔԱՐՍԴ ՅՈՎՍ. — Պատմական քննականութիւն կիլիկեան հայերէնի. Թարգմ. Հ. Ց. ԱԻԳԵՐԵԱՆ . . . . . . 264

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՐՍԷՍ Հ. Ս. — Հանդէս մատեան. — Թատրոն. — Բառացուցակ. — Recueil de chants arméniens . . . . . . . 267

ՆՐՍԷՍ Հ. Ս. — Հանդէս Հանդիսից. — Նոր կեանք. — Շաւիղ. — Բիւրակն. — Ծրագիր. 270

ԳԱՍՄԱՃԵԱՆ. — Ուսումնասիրութիւն Պարոնեանի երկասիրութեանց. . . . 273

ԹԵՆՆԻՍՈՆ Ա. — Մահ Արթուրոյ. Թրգմն. ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. . . . . . 277

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Մագնիսական քուն . . 284

Մեծ հնարանական գիւտ մը յԵփեսոս . 287

Քաղաքական ամիս . . . . . . 288


digitised by A.R.A.R.@